# ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԴ) հայ ազգային քաղաքական կուսակցություն է: Ստեղծվել է 1890-ի հուլիս-օգոստոսին, Թիֆլիսում: Հիմնադիրները և առաջին ղեկավարներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռոստոմ): Նպատակն էր համախմբել արդեն գործող հեղափոխական խմբերին, անհատ գործիչներին ու մտավորականներին: Դրանով պայմանավորված՝ նորակազմ կուսակցությունը, որին մաս էին կազմում նաև հնչակյանները, կոչվել է Հայ հեղափոխականների դաշնակցություն: 1890-ի սեպտեմբերին հրապարակված հռչակագրում կոչ էր անում բոլոր հայերին զինվորագրվելու «թրքահայության քաղաքական և տնտեսական ազատագրումին»: Կուսակցության նպատակներն ու գործելակերպն ավելի հստակացան 1892-ի ընդհանուր ժողովում: Կուսակցությունից արդեն հեռացել էին հնչակյաններն ու մի քանի այլ խմբակներ: Ընդհանուր ժողովում որոշվեց կուսակցությունը կոչել Հայ հեղափոխական դաշնակցություն:

ՀՀԴ-ն դավանում է ժողովրդավարության ու ընկերվարության (սոցիալիզմի) գաղափարներ, սակայն կուսակցության գաղափարախոսության, ռազմավարության և գործելակերպի հիմնական խնդիրը Հայկական հարցի լուծումն է: Իր գործունեության առաջին շրջանում նպատակին հասնելու հիմնական միջոց էր համարում զինված ելույթներն ու ահաբեկչությունը, քաղաքական աշխատանքը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս: Ծրագրի ագրարային մասում նախատեսվում էր «տալ չունեցողին հող և ապահովել մշակողին հողից օգտվելու կարելիությունը», «ուժ տալ գյուղացու համայնական սկզբունքներին՝ զարգացնելով այն ընկերային հիմնարկությունները, ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրա՝ տեղական և պատմական հանգամանքների ազդեցության տակ»:

ՀՀԴ-ի գաղափարական ակունքները բխում էին ազգային ինքնագիտակցությունից, սակայն կրում էին նաև Եվրոպայի ազատական-ժողովրդավարական գաղափարախոսության, ռուս հեղափոխական մտածողության, մասնավորապես «Նարոդնայա վոլյա» հեղափոխական-նարոդնիկական կազմակերպության գաղափարախոսության ազդեցությունը: Կուսակցության հենարանն էին հայ գյուղացիությունը, քաղաքի մանրբուրժուական խավը, բանվորությունն ու մտավորականության ներկայացուցիչները:

ՀՀԴ առաջին ընդհանուր ժողովը, հաշվի առնելով հայ իրականության առանձնահատկությունը՝ հայ բնակչության սփռվածությունը (Անդրկովկասում, Արևմտյան Հայաստանում, աշխարհի շատ հայ գաղթավայրերում), կուսակցության գործելակերպում և կազմակերպական կառուցվածքում կիրառել է ապակենտրոնացման սկզբունքը: Կարճ ժամանակում կուսակցության կազմակերպություններ են ստեղծվել Արևելյան Հայաստանում (Ալեքսանդրապոլ, Երևան, Ղարաբաղ), Անդրկովկասի հայաշատ քաղաքներում (Թիֆլիս, Բաքու), Հյուսիսային Կովկասում (Նոր Նախիջևան), Արևմտյան Հայաստանում (Մուշ, Սասուն, Վան), Կիլիկիայում, Կ. Պոլսում, Իզմիրում, Եգիպտոսում, Եվրոպայում, Ամերիկայում: ՀՀԴ Արևելյան բյուրոն իր վրա է վերցրել արևմտահայերին զինելու և ինքնապաշտպանության նախապատրաստելու, այնտեղ զենք ու մարտական խմբեր տեղափոխելու, արդեն գործող հայ ֆիդայական խմբերի հետ կապ հաստատելու գործի ղեկավարությունը: ՀՀԴ-ի զինյալ պայքարում իրենց սխրանքներով աչքի են ընկել Արաբոն, Թաթուլը, Հրայրը, Սերոբը, Սոսեն, Նիկոլ Դումանը, Խանասորա Վարդանը, Պետրոս Սըրեմճյանը, Դերսիմի Քեռին, Խանը, Վանա Իշխանը, Անդրանիկը, Գևորգ Չավուշը և շատ ուրիշներ:

ՀՀԴ-ն մեծ կարևորություն է տվել Հայկական հարցի լուծման գործում նաև արևմտյան տերությունների դերին: Կուսակցության գործիչները կապ են հաստատել եվրոպական երկրների քաղաքական ու հասարակական շրջանակների հետ՝ հույս ունենալով եվրոպական տերությունների միջամտությամբ վերաբացել և ապա լուծել Հայկական հարցը: Եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու նպատակով ՀՀԴ-ն կազմակերպել է զինյալ ելույթներ, ինչպես Օսմանյան բանկի գրավումը (1896) Կ.

Պոլսում, Խանասորի արշավանքը (1897) են: XX դ. սկզբին գլխավորել է Անդրկովկասում հայ ժողովրդի հուժկու ընդվզումը ցարական կառավարության քաղաքականության դեմ՝ հատկապես Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքի (1903) կապակցությամբ: 1905–1906-ին Անդրկովկասում հրահրված հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ՀՀԴ-ն շատ տեղերում գլխավորել է հայ բնակչության ինքնապաշտպանությունը, իրագործել ահաբեկչական գործողություններ ցարական անհանդուրժելի իշխանավորների նկատմամբ: Ցարական կառավարությունը դատական գործ է հարուցել ՀՀԴ-ի դեմ, բանտարկել կուսակցության բազմաթիվ ակտիվ անդամների:

Ռուսաստանում ծավալված հեղափոխական դեպքերի (1905–07) և հակահայ հալածանքների ազդեցության ներքո ՀՀԴ-ն վերանայել է իր ծրագիրը (1907), հստակեցրել նրա սոցիալիստական դրույթները և ազգային ազատագրական պայքար ծավալել արևելահայ և արևմտահայ հատվածներում հավասարապես: XIX դ. վերջին – XX դ. սկզբին ՀՀԴ-ն կապ է հաստատել Թուրքիայի հակասուլթանական որոշ ուժերի, մասնավորապես երիտթուրքերի հետ: ՀՀԴ-ի ներկայացուցիչները մասնակցել են երիտթուրքերի համաժողովներին (1903, 1907): Հայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ քննադատել են այս գործելակերպը: Իրականում այն կրել է սոսկ մարտավարական բնույթ և ուղղված էր Աբդուլ Համիդ II-ի վարչակարգի դեմ: Թուրքիայում 1908-ի հեղաշրջումից հետո, երբ իշխանության գլուխ են անցել երիտթուրքերը, ՀՀԴ շատ անդամներ Անդրկովկասից եկել են Թուրքիա և Արևմտյան Հայաստան: Սահմանադրական Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր են ընտրվել նաև ՀՀԴ մի շարք անդամներ: Սակայն շուտով Կիլիկիայում տեղի ունեցած դեպքերը, 1909-ի Ադանայի կոտորածը ցույց են տվել, որ երիտթուրքերը դահիճ սուլթանների արժանի հետևորդներն են: 1912-ին ՀՀԴ Արևմտյան բյուրոն հայտարարել է նրանց հետ վերջնական խզման մասին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–18) կուսակցությունն ակտիվորեն մասնակցել է հայկական կամավորական շարժման կազմակերպմանը, բազմաթիվ դաշնակցականներ զինվորագրվել են. մարտական գործողությունները հմտորեն ղեկավարել են Անդրանիկը (Ա. Օզանյան), Դրոն (Դ. Կանայան), Համազասպը (Հ. Սրվանձտյան), Վարդանը (Վ. Մեհրաբյան), Քեռին (Ա. Գավաֆյան) և ՀՀԴ մարտական դպրոցն անցած այլ գործիչներ: Մեծ եղեռնի ժամանակ շատ դաշնակցականներ մասնակցել են հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, շատերն էլ ցեղասպանության զոհ են դարձել: Հայ ազգային մյուս կուսակցությունների նման, ՀՀԴ-ն ևս անպատրաստ գտնվեց դեպքերի նման զարգացման հանդեպ, և նրա կազմակերպություններն Արևմտյան Հայաստանում ջախջախվեցին:

Պատերազմի ժամանակ և հատկապես Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխությունից (1917) հետո ՀՀԴ գործունեության հիմնական ասպարեզը վերստին Անդրկովկասն էր: Աջակցելով Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությանը՝ Դաշնակցությունը մասնակցել է Անդրկովկասում ստեղծված բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների գործունեությանը: Ազդեցիկ դիրք է ունեցել Հայոց ազգային խորհրդում և նրա մասնաճյուղերում:

1917-ի հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՀՀԴ-ն մասնակցել է Անդրկովկասում իշխանության նոր մարմինների՝ Անդրկովկասյան կոմիսարիատի և Անդրկովկասյան սեյմի ստեղծմանը, Խորհրդային Ռուսաստանից երկրամասի անջատմանը և ինքնուրույն Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱԴՖՀ) կազմավորմանը: Ներքին տարաձայնությունների և արտաքին ռազմաքաղաքական գործոնների ազդեցության հետևանքով ԱԴՖՀ-ն շուտով (1918-ի մայիսի 26) տրոհվել է: Մայիսի 28-ին հռչակվել է Հայաստանի Հանրապետությունը: Հանրապետության ստեղծմանը նախորդել են Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի 1918-ի հերոսամարտերը. հայ մարտիկները, այդ թվում և ՀՀԴ անդամները, ֆիդայիներ և խմբապետներ պարտության են մատնել Արևելյան Հայաստան ներխուժած թուրք մեծաքանակ զորքին՝ ապահովելով հայկական պետականության վերականգնումը:

Հայաստանի Հանրապետությունում (1918–20) հաստատվել է բազմակուսակցական համակարգ: ՀՀԴ-ն նորաստեղծ պետության առաջատար քաղաքական ուժն էր, նրա ղեկավարները՝ Հովհաննես Քաջազնունին, Ալեքսանդր Խատիսյանը, Համո Օհանջանյանը, Սիմոն Վրացյանը, հաջորդաբար գլխավորել են հանրապետության կառավարությունը: Կառավարության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը Հայկական հարցի լուծումն էր, կորցրած տարածքների հետբերումը և անկախ պետականության ամրապնդումը: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունը նոր իրադրություն էր ստեղծել, ինչը փորձել է օգտագործել Հայաստանի կառավարությունը՝ կողմնորոշվելով դեպի արևմտյան տերությունները: 1918–19-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքը

նշանակալիորեն ընդարձակվել է: Թուրքական զորքերի հեռացումից հետո Հայաստանին են վերադարձվել Ալեքսանդրապոլի նահանգը, Լոռու հարավային մասը, Կարսի մարզը, Սուրմալուի և Նախիջևանի գավառները, վերականգնվել են 1914-ի սահմանները Թուրքիայի հետ: 1919-ի մայիսի 28-ին կառավարությունը Հայաստանը հռչակեց միացյալ, ազատ և անկախ հանրապետություն՝ դրանով հաստատելով հայ ժողովրդի պահանջատիրությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Նույն թվականի սեպտեմբերին ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովի ընդունած նոր ծրագիրը հաստատագրել է «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի» կերտումը, ինչը վերջնանպատակ է մնում նաև 1982-ին, 1998-ին ընդունված ծրագրերում:

Դառնալով իշխող կուսակցություն՝ ՀՀԴ-ն քայլեր է կատարել երկրի տնտեսությունը վերականգնելու, հանրապետությունում կարգ ու կանոն հաստատելու, լուսավորության գործը կարգավորելու ուղղությամբ: Սակայն հանրապետության ներքին ու արտաքին ծանր վիճակը հնարավորություն չի տվել զարգացնելու ստեղծարար աշխատանքը, հաղթահարելու երկրում մոլեգնող սովը, անիշխանության դրսևորումները: Ակնհայտ էր նաև Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումը: 1920-ի աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի ժամանակ Հայաստանը մեկուսացվել է, նրան լքել են արևմտյան դաշնակիցները, օգնության չի հասել նորաստեղծ Ազգերի լիգան: Իր ճնշումն ուժեղացրել է նաև Խորհրդային Ռուսաստանը: Պատերազմում պարտվելով՝ Հայաստանը ստիպված էր ստորագրել Ալեքսանդրապոլի պայմանագիրը (1920-ի դեկտեմբերի 2), որի հետևանքով տարածքային մեծ կորուստներ է կրել: Պայմանագիրը ստորագրելուց մի քանի ժամ առաջ, սակայն, կառավարությունը հրաժարվել էր իշխանությունից և այն հանձնել բոլշևիկներին:

1921-ի Փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտությունից հետո ՀՀԴ-ն իր գործունեությունը շարունակել է արտասահմանում: 1921-ի ապրիլին Բուխարեստում հրավիրված ՀՀԴ խորհրդաժողովը որոշել է, որ պատրաստ է հանուն Հայաստանի վերաշինության համագործակցել խորհրդային իշխանության հետ: Նույն թվականի հուլիսին Ռիգայում կայացել են բանակցություններ ՀՀԴ-ի և ՌԿ(բ)Կ-ի միջև: Թեև ձեռք է բերվել համաձայնություն, ըստ որի՝ ՀՀԴ-ն պարտավորվում էր համակողմանի օգնել և աջակցել Խորհրդային Հայաստանի կառավարությանը, սակայն 1921-ի հուլիսի 22-ին, Լեռնահայաստանի անկումից և Սյունիքը Խորհրդային Հայաստանին միացնելուց անմիջապես հետո, Հայաստանի կոմկուսի ԿԿ իր բողոքն է հայտնել համաձայնության կապակցությամբ և բացառել ՀՀԴ-ի հետ բանակցություններ վարելը: Բողոքից հետո ՌԿ(բ)Կ ԿԿ մերժել է համաձայնագրի նախագիծը: 1923-ի նոյեմբերին խորհրդային իշխանությունների պահանջով Երևանում գումարված նախկին դաշնակցականների համահայաստանյան համագումարի որոշմամբ ՀՀԴ-ն լուծարվել է ԽՍՀՄ-ում, իսկ 1933-ին ՀՀԴ 12-րդ ընդհանուր ժողովը պաշտոնապես լուծարել է իր կազմակերպությունն ու գաղտնի գործունեությունը Հայաստանում:

Այդ շրջանում ՀՀԴ-ն, որի ղեկավարների որոշ մասը գտնվում էր Կ. Պոլսում, հետևողականորեն իրականացնում էր Մեծ եղեռնի երիտթուրք պատասխանատուների ահաբեկման «Նեմեսիս» վրիժառուական գործողությունը:

1924–25-ին Փարիզում կայացած ՀՀԴ 10-րդ ընդհանուր ժողովը որոշել է պահպանել ԽՍՀՄ-ի հանդեպ որդեգրած «լոյալ ընդդիմադրի» քաղաքականությունը, սփյուռքում հետևողականորեն ծավալել հայապահպան կազմակերպչական գործունեություն: ՀՀԴ-ի հովանավորությամբ ստեղծվել են բարեգործական, մշակութային, կրթական, մարզական, երիտասարդական և այլ կազմակերպություններ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ՀՀԴ 13-րդ ընդհանուր ժողովը (Կահիրե, 1938) որոշել է, որ պատերազմի բռնկման պարագայում «Դաշնակցությունը իր պայքարին մեջ ելակետ պետք է ունենա բացառաբար հայ ժողովրդի ֆիզիկական փրկության հարցը և ըստ այնմ ալ վարե իր քաղաքականությունը՝ զայն չկաշկանդելով Հայ դատին վերաբերող առաջադիմություններով»: Որոշ դաշնակցական ղեկավարներ, սակայն, դեպի Արևելք հիտլերյան զորքերի առաջխաղացման մեջ տեսել են ԽՍՀՄ-ի քայքայման և Հայաստանի անկախության վերականգնման հնարավորություն: Պատերազմի ընթացքում ՀՀԴ բյուրոն վարել է դաշնակիցներին ի նպաստ քաղաքականություն, ֆաշիստական տիրապետության տակ գտնվող երկրներում տեղի հայությանը փրկելու նպատակով, որոշ գործիչներ համագործակցել են հիտլերականների հետ: 1942-ին Բեռլինում կազմավորված Հայ ազգային խորհուրդը աշխատանք է կատարել Գերմանիայի ճամբարներում հայտնված հայ ռազմագերիների վիճակը բարելավելու համար, նպաստել գերմանական բանակի կազմում այդ ռազմագերիներից հայկական լեգեոն ստեղծելու գործին: Պատերազմի վերջին փուլում ՀՀԴ-ն պաշտպանել է Կարսի և Արդահանի շրջանները ՀԽՍՀ-ին կցելու ԽՍՀՄ պահանջը: 14-րդ ընդհանուր ժողո-

վին (1947) ներկայացրած իր զեկուցման մեջ բյուրոն նշել է, որ Հայ դատը կարող է լուծվել միայն ԽՍՀՄ-ի հետ համագործակցությամբ: Սակայն շուտով ծավալված սառը պատերազմի տարիներին ՀՀԴ-ն փոխել է իր դիրքորոշումը՝ որդեգրելով հակախորհրդային կողմնորոշում:

1956-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունների ժամանակ ՀՀԴ-ն ակտիվորեն պաշտպանել է Զարեհ եպս. Փայասլյանի թեկնածությունը: Ընդունելով հանդերձ Մայր աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր գերակայությունը՝ առաջ է քաշել սփյուռքի թեմերն Անթիլիասին վարչականորեն ենթարկելու խնդիրը: ՀՀԴ-ն ակտիվ դեր է խաղացել Իրանի հայոց թեմերն Էջմիածնից անջատելու, իսկ հետագայում Հունաստանում, ԱՄՆ-ում և այլուր անթիլիասական նոր թեմեր ստեղծելու գործում:

1959-ին կայացած ՀՀԴ 17-րդ ընդհանուր ժողովը եզրակացրել է, որ անցած տասնամյակում ԽՍՀՄ-ի հանդեպ կուսակցության վարած քաղաքականությունը չի հանգեցրել սպասված արդյունքին, իսկ 1967-ին 19-րդ ընդհանուր ժողովը որոշել է ԽՍՀՄ-ի քննադատությունը սահմանափակել միայն հայ իրականության և Հայ դատի հետ կապված խնդիրներով:

Արդի ժամանակաշրջանում ՀՀԴ-ն շարունակում է իր հիմնական խնդիրը համարել Հայկական հարցի լուծումը: Ըստ կուսակցության վերջին ընդհանուր ժողովների փաստաթղթերի՝ անհրաժեշտ է ստեղծել ազատ, անկախ և միացյալ Հայաստան, որի սահմանները պետք է համապատասխանեն Սևրի հաշտության պայմանագրի (1920) պայմաններին, ընդգրկեն նաև Ղարաբաղը, Նախիջևանը: Թուրքիան պետք է ընդունի Հայոց ցեղասպանության փաստը և հատուցի հայերին հասցրած վնասը: Իր հանձնախմբերի գործունեությամբ (հրապարակումներ, ժողովների և ցույցերի կազմակերպում ևն) ՀՀԴ-ն ձգտում է ազդել միջազգային հասարակական կարծիքի վրա, հասնել Հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտմանը և պատմական արդարության վերականգնմանը: ՀՀԴ-ի և հատկապես նրա Հայ դատի հանձնախմբերի գործունեությունը նպաստել է Հայկական հարցի քննարկմանը Եվրախորհրդարանում (1987-ի հունիս), Հայոց ցեղասպանության հարցի քննարկմանը ԱՄՆ Սենատում ևն:

Հաշվի առնելով Հայաստանում կատարվող արմատական փոփոխությունները՝ ժողովրդավարության և հրապարակայնության զարգացումը, բազմակուսակցական համակարգի ձևավորումը, ՀՀԴ 24-րդ ընդհանուր ժողովը (1988) առաջ է քաշել «Դեպի երկիր» կարգախոսը, որով պատրաստակամություն է հայտնել իր բոլոր կարողություններն ի սպաս դնել Հայաստանի բարգավաճմանը՝ անկախ այնտեղ տիրող վարչակարգից: 1988-ի հոկտեմբերին ՀՀԴ, Հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների հետ, հանդես է եկել հայտարարությամբ՝ միանգամայն արդարացի ճանաչելով Հայաստանի հետ վերամիավորվելու Արցախի հայ բնակչության պահանջը: 1990-ի օգոստոսի 8-ին ՀՀԴ-ն բացահայտել է իր կազմակերպական ներկայությունը Հայաստանում:

1994-ի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով, ապա և ՀՀ Գերագույն դատարանի որոշմամբ (1995-ի հունվարի 13) ՀՀԴ-ի գործունեությունը Հայաստանում կասեցվել է՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի խախտման մեղադրանքով: ՀՀԴ Հայաստանի ղեկավար մարմնի անդամներից մի քանիսը ձերբակալվել են և դատի տրվել, արգելվել է կուսակցության պաշտոնաթերթերի հրատարակումը: Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից (1998-ի փետրվարի 3) և Ռոբերտ Քոչարյանի ՀՀ նախագահի պաշտոնակատար դառնալուց մի քանի օր անց ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիան իր 1998-ի փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնել է ՀՀԴ-ի գործունեությունը Հայաստանում: «Իրադրության փոփոխման կապակցությամբ» կարճվել են քրեական գործերը ՀՀԴ Հայաստանի գերագույն մարմնի անդամների նկատմամբ, վերսկսվել է կուսակցության թերթերի հրատարակումը: 1999-ին ընտրված ՀՀ ԱԺ-ում ՀՀԴ-ն ունեցել է խմբակցություն՝ կազմված 8 պատգամավորից: 2003-ին ընտրված ՀՀ ԱԺ-ում ՀՀԴ-ն ներկայացված է 11 պատգամավորներով: ԱԺ ընտրությունների արդյունքում ձևավորվել է կոալիցիոն կառավարություն, որի մեջ մտել է նաև ՀՀԴ-ն:

ՀՀԴ հովանավորությամբ գործում են Հայ օգնության միությունը, Համազգային մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև բազմաթիվ դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ ևն:

1890-ի հիմնադիր ժողովից ի վեր տեղի է ունեցել ՀՀԴ 29 ընդհանուր ժողով (վերջինը 2002-ին՝ Երևանում):

28-րդ ընդհանուր ժողովը (2000-ի փետրվար) արձանագրել է, որ ՀՀԴ-ն շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած քաղաքականությանը՝ կուսակցության ռազմավարության առաջնահերթ նպատակ համարելով ՀՀ և ԼՂՀ պետականությունների ամրապնդումը, Հայոց ցեղասպանության և հողային պահանջատիրության խնդիրներին հետամուտ լինելը, ինչպես նաև նոր ստեղծվող համայնքների (ԱՊՀ երկրներում) կազմակերպմանն աջակցելը: Ընդհա-

նուր ժողովը որոշել է Բյուրոյի կենտրոնական գրասենյակը Լիբանանից տեղափոխել Հայաստան:

ՀՀԴ կանոնադրությամբ՝ կուսակցության բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որը գումարվում է չորս տարին մեկ անգամ: Նրա որոշումները պարտադիր են ՀՀԴ բոլոր ժողովների, մարմինների և անդամների համար: ՀՀԴ գերագույն գործադիր մարմինը՝ Բյուրոն, ընտրվում է գաղտնի քվեարկությամբ՝ ընդհանուր ժողովի կողմից: Բյուրոն մեկնաբանում է ՀՀԴ ծրագիրը, կազմակերպական կանոնները և ընդհանուր ժողովի որոշումները, հսկում նրանց գործադրումը, ղեկավարում կուսակցության ընդհանուր քաղաքականությունը: ՀՀԴ-ն ավելի օպերատիվ գործելու համար միաժամանակ ունեցել է երկու (և նույնիսկ երեք) բյուրոներ: Միաբյուրո կարգը վերջնականապես հաստատվել է 1919-ին: ՀՀԴ-ն տարածքային առումով բաժանվում է շրջանների: 500-ից ավելի անդամ ունեցող շրջաններն ընտրում են իրենց կենտրոնական կոմիտեները, որոնք ինքնուրույնաբար վարում են տեղական գործերը, տնօրինում իրենց շրջաններում օտար և ազգային իշխանությունների ու կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները՝ ռազմավարական հարցերում մնալով ենթակա ընդհանուր ժողովի որոշումներին:

1890-ից սկսած՝ ՀՀԴ-ի տարբեր մարմինների, ինչպես նաև անհատ դաշնակցականների հրատարակած պաշտոնաթերթերի, կիսապաշտոնաթերթերի ու պարբերականների ընդհանուր թիվը շուրջ 250 է: Առ այսօր լույս են տեսնում կուսակցության պաշտոնաթերթ «Դրոշակը» (1891–1914-ին՝ Ժնևում, 1925–34-ին՝ Փարիզում, 1969–85-ին՝ Բեյրութում, 1986–98-ին՝ Աթենքում, 1999-ից՝ Երևանում), «Հայրենիք» (Բոստոնում, 1899-ից), «Ասպարեզ» (Լոս Անջելեսում, 1908-ից), «Հուսաբեր» (Կահիրեում, 1913-ից), «Ազդակ» (Բեյրութում, 1927-ից), «Ալիք» (Թեհրանում, 1931-ից), «Արմենիա» (Բուենոս Այրեսում, 1931-ից), «Ազատ օր» (Աթենքում, 1945-ից), «Հորիզոն» (Մոնրեալում, 1979-ից), «Երկիր» (Երևանում, 1991-ից) պարբերաթերթերը և ՀՀԴ երիտասարդական միությունների «Կայծեր» (Բեյրութում, 1983-ից) եռամսյա թերթը:

*Գրկ.* Հովհաննիսյան Ա., Դաշնակցության առթիվ, Մ., 1927: Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890–1895, Բոստոն, 1950: Վարանդյան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 1–2, Թեհրան, 1981: Նույնի, Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ.1–4, Բեյրութ, 1984–85: Հայ յեղափոխական դաշնակցութիւն, ծրագիր և կանոնադրութիւն, Աթենք, 1982: Գյուլխանդանյան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը և նրա հեղինակները, Աթենք, 1987: Տասնապետյան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհանուր ժողով (1890–1924), Աթենք, 1988:

*Կոստանդին Խուդավերդյան*
*Ռուբինա Փիրումյան (ԱՄՆ)*